# «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենքի նախագիծ

***<u>ՆԱԽԱԳԻԾ</u>***

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ**

**Գ Լ ՈՒ Խ 1**

***ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ***

**Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան**

1. Սույն օրենքով սահմանվում են սոցիալական աշխատանքի հասկացությունը, սոցիալական աշխատանքի սկզբունքները, սոցիալական աշխատանքի շրջանակներում իրականացվող միջոցառումները, սոցիալական աշխատանքի մասնագետների իրավունքներն ու պարտականությունները, նրանց գործունեության երաշխիքները, սոցիալական աշխատանքի մասնագետների հասարակական միավորում հանդիսացող պատասխանատու կազմակերպությունը (այսուհետ՝ պատասխանատու կազմակերպություն) գործունեության հիմնական նպատակը և խնդիրները, կարգավորվում են սոցիալական աշխատանքի մասնագետների հավաստագրման, վերապատրաստման, սուպերվիզիայի իրականացման հետ կապված հարաբերությունները:

**Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները**

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **շահառու**՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձ, ընտանիք, սոցիալական այլ խումբ, որին սոցիալական աշխատանքի մասնագետի կողմից տրամադրվում են սոցիալական ծառայություններ.

2) **սոցիալական աշխատանքի մասնագետի մասնագիտական գործունեության հավաստագիր (այսուհետ՝ հավաստագիր)**՝ սոցիալական աշխատանքի մասնագիտական գործունեությամբ զբաղվելու թույլտվություն.

3) **սուպերվիզիա**՝ սույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով սահմանված գործընթաց.

4) **սուպերվիզոր**՝ սուպերվիզիա իրականացնող մասնագետ

5) **սոցիալական աշխատանքի չափորոշիչներ՝** «սոցիալական աշխատանք» մասնագիտությամբ մասնագիտական կրթության պետական կրթական, սոցիալական աշխատանքի մասնագետների պրակտիկային, սոցիալական

աշխատանքի սուպերվիզիային առաջադրվող նվազագույն պահանջները, վարքագծի միասնական կանոնները և սոցիալական աշխատանքի էթիկայի սկզբունքները, դրանց խախտման դեպքում կիրառվող ընթացակարգերը նկարագրող դրույթների ամբողջություն.

2. Սույն օրենքում օգտագործվող այլ հասկացությունները կիրառվում են «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իմաստով, եթե սույն օրենքի դրույթներից չի բխում դրանց օգտագործման այլ իմաստ:

**Հոդված 3. Օրենքի գործողության ոլորտը**

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների, սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների սոցիալական աշխատանքի մասնագետների վրա:

**Հոդված 4. Սոցիալական աշխատանքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը**

1. Սոցիալական աշխատանքի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Սոցիալական աջակցության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով,դրանց համապատասխան ընդունված իրավական այլ ակտերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով:
2. Եթե Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի նորմերը:

## Գ Լ ՈՒ Խ 2

## *ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ*

**Հոդված 5. Սոցիալական աշխատանքը, դրա իրականացումը և նպատակները**

1. Սոցիալական աշխատանքը սոցիալական արդարության ու մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքների վրա հիմնված մասնագիտական գործունեություն է ուղղված անձիի, ընտանիքի, խմբերի կենսական պահանջմունքների բավարարմանը՝ ուժեղացնելով նրանց գործառնական կարողությունները, եթե անձը, ընտանիքը, խումբը օբյեկտիվ իրավիճակով պայմանավորված չի կարողանում ինքուրույնաբար լուծել դրանք, ինչպես նաև համայնքների սոցիալական պատասխանատվության մեծացմանը և սոցիալական պլանավորմանը:
2. Սոցիալական աշխատանքը կարող է իրականացվել՝

1) Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով՝ սոցիալական աշխատանքի մասնագետի՝ որպես աշխատող հանդես գալու դեպքում, այդ թվում՝ քաղաքացիական ծառայող կամ համայնքային ծառայող (որպես գործատուի մոտ վարձու աշխատանքային գործունեություն).

2) իրավաբանական և ֆիզիկական անձանց (բայց ոչ շահառուների) հետ կնքած քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա (որպես քաղաքացիաիրավական պայմանագրով ծառայությունների մատուցում կամ աշխատանքների կատարում:

3. Սոցիալական աշխատանքի նպատակն է նպաստել՝

1) շահառուների ինքնօգնության կարողությունների, սոցիալական հմտությունների զարգացմանը, նրանց կենսամակարդակի բարձրացմանը և կյանքի որակի բարելավմանը.

2) շահառուների իրավունքների պաշտպանությանը և իրացմանը.

3) համայնքներում ռիսկային գործոնների՝ սոցիալական խնդիրների առաջացման վտանգի, բացահայտմանը, դրանց նվազեցմանը, կոլեկտիվ պաշտպանության մեխանիզմների ձևավորմանը և խթանմանը.

4) բարձրորակ և մատչելի սոցիալական ծառայությունների զարգացմանը.

5) շահառուի սոցիալական մեկուսացման կանխարգելմանը և սոցիալական ներառմանը.

6) հասարակությունում սոցիալական արդարության խթանմանը՝ հիմնվելով մարդասիրության (հումանիզմի) և մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում գտած այլ սկզբունքների և նորմերի վրա:

**Հոդված 6. Սոցիալական աշխատանքի սկզբունքները**

1. Սոցիալական աշխատանքն իրականացվում է «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 20-րդ հոդվածի 1-ին մասերով և սույն մասով սահմանված հետևյալ սկզբունքներին համապատասխան՝

1) առաջնահերթությունը՝ շահառուի իրավունքների առաջնահերթության ճանաչումը բոլոր դեպքերում, բացառությամբ՝ երբ դա հակասում է այլ անձանց իրավունքներին և օրինական շահերին.

2) հանդուրժողականությունը՝ շահառուների նկատմամբ համբերատար վերաբերմունքը, նրանց աշխարհայացքի, սովորությունների, կենցաղավարման և վարքագծի նկատմամբ հանդուրժողականության դրսևորումը.

3) սոցիալական ռեսուրսների համախմբումը՝ սոցիալական աշխատանքի իրականացման ընթացքում մարդկային, նյութական, վարչական հասանելի

ռեսուրսների որոնումը, դրանց ներգրավումը և արդյունավետ օգտագործումը՝ շահառուի սոցիալական կարիքների բավարարման, կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելուն նպաստող գործոնների վերհանման, կանխման ու հակազդման նպատակով.

4) իրավաչափությունը՝ լիազորությունների և գործառույթների իրականացումը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության օրենքներին, այլ իրավական ակտերին, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին և սոցիալական աշխատանքի մասնագետների վարքագծի կանոնագրքին (այսուհետ՝ կանոնագիրք) համապատասխան.

5) տնտեսվարությունը՝ գործառույթների և լիազորությունների պատշաճ իրականացումը սոցիալական աշխատանքի մասնագետի տիրապետման ներքո գտնվող միջոցների առավել բարեխիղճ և արդյունավետ օգտագործմամբ.

6) պատասխանատվությունը՝ իր կողմից իրականացվող և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գործառույթների և պարտականությունների համար սոցիալական աշխատանքի մասնագետի պատասխանատու լինելը:

**Հոդված 7. Սոցիալական աշխատանքի շրջանակներում իրականացվող միջոցառումները**

1. Սոցիալական աշխատանքը ներառում է հետևյալ հիմնական միջոցառումների իրականացումը՝

1) տվյալների հավաքագրում և վերլուծություն՝ Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված բոլոր միջոցներով շահառուներին վերաբերող տեղեկատվության հավաքագրման և վերլուծման համակարգային գործընթաց, որն իրականացվում է շահառուների իրավիճակի ուսումնասիրության, գնահատման և հետագա բարելավման նպատակով.

2) պլանավորում՝ ձեռք բերված տեղեկատվության հիման վրա համապատասխան միջոցառումների, աշխատանքների և գործողությունների ծրագրերի մշակում՝ ուղղված շահառուների կյանքի դժվարին իրավիճակի կանխարգելմանը կամ հաղթահարմանը.

3) կազմակերպական (մոբիլիզացնող) միջոցառումներ՝ շահառուների՝ կյանքի դժվարին իրավիճակին, կարիքների բավարարմանը արձագանքելու և կյանքի որակի բարելավման կազմակերպված գործընթաց, որում սոցիալական աշխատանքի մասնագետները հանդես են գալիս նախաձեռնողների և (կամ) կազմակերպիչների և (կամ) սուպերվիզորների դերում.

4) փորձագիտական կարծիքի տրամադրում՝ սոցիալական աշխատանքի մասնագետների կողմից սոցիալական քաղաքականության բարեփոխումների, ընթացիկ սոցիալական ծրագրերի, շահառուի սոցիալական կարիքներին համարժեք սոցիալական ծառայությունների տրամադրման վերաբերյալ առաջարկությունների և եզրակացությունների տրամադրում.

5) «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված բնույթի՝ մեկ կամ մի քանի սոցիալական ծառայությունների կազմակերպում և (կամ) տրամադրում.

6) շահապաշտպանություն (ադվոկացիա)՝ շահառուների իրավունքների պաշտպանությանն ուղղված այնպիսի գործունեություն, որի նպատակն է ապահովել շահառուների իրավունքների արդյունավետ իրականացումը դրանով մատչելի դարձնել նրանց համար նախատեսված սոցիալական ծառայությունները.

7) սոցիալական մենթորություն՝ գործընթաց, որի ընթացքում սոցիալական աշխատանքի մասնագետը, օգտագործելով իր մասնագիտական փորձառությունը, աջակցում է շահառուների ինքնօգնության, ինքնորոշման ու ծագած հիմնախնդիրներն ինքնուրույն լուծելու ունակությունների զարգացմանը.

8) սոցիալական ուղեկցում՝ շահառուի գործողությունների նկատմամբ վերահսկողություն, երբ նա իրականացնում է իր սոցիալական կարիքների բավարարմանն ուղղված պլանը.

9) սոցիալական կառավարում՝ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների, սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների և այլ սուբյեկտների հետ համագործակցության շրջանակներում սոցիալական աշխատանքի մասնագետի կողմից թիմային աշխատանքի և կազմակերպական կառավարման մեթոդների և հմտությունների օգտագործում.

10) ճգնաժամային միջամտություն՝ սոցիալական աշխատանքի մասնագետի կողմից մասնագիտական մեթոդների և հմտությունների՝ այդ թվում առաջին օգնության, կիրառմամբ իրականացվող միջամտություն արտակարգ իրավիճակներում, ինչպես նաև անհետաձգելի լուծում պահանջող՝ շահառուների կյանքին կամ առողջությանը վտանգ սպառնացող իրավիճակներում.

11) մշտադիտարկում և գնահատում՝ շահառուի սոցիալական դեպքի վարման ընթացքում իրականացվող գործողությունների և նրանց արդյունքների վերաբերյալ տարբեր մեթոդներով տեղեկատվության շարունակական ստացման ու վերլուծման գործընթաց՝ հնարավոր բացասական հետևանքները կանխելու, զարգացումներն արդյունավետ օգտագործելու, շահառուի և սոցիալական աշխատանքի մասնագետի միջև հետադարձ կապն ապահովելու և աջակցող ցանցն ընդլայնելու նպատակով.

12) կոնֆլիկտների կառավարում՝ կոնֆլիկտների հավանական առաջացումն առավելագույն արդյունավետությամբ կանխարգելելուն և կոնֆլիկտների առաջացման վաղ փուլերում դրանց լուծմանն ուղղված պլանավորման գործընթաց.

13) սոցիալական գնահատում՝ ակտիվ ճանաչողական գործընթաց, որի ժամանակ սոցիալական աշխատանքի մասնագետը շահառուի մասնակցությամբ բացահայտում է վերջինիս կարիքները, դժվարությունների

բնույթը, դրանց պատճառները և այն արդյունավետ միջոցները, որոնք կարող են օգնել հաղթահարելու խնդրահարույց իրավիճակը.

14) սուպերվիզիա՝ գործընթաց, որի արդյունքում համապատասխան հավաստագիր ունեցող սոցիալական աշխատողն օգտագործելով իր մասնագիտական գիտելիքները, փորձառությունն ու կազմակերպական հմտությունները նպաստում է պրակտիկ սոցիալական աշխատանքի մասնագետների մասնագիտական կատարելագործմանը, անհատական կարողությունների զարգացմանը, ինչպես նաև մասնագիտական այրման համախտանիշի կանխմանը (հաղթահարմանը)՝ այդ կերպ նպաստելով շահառուներին տրամադրվող սոցիալական ծառայությունների արդյունավետության և որակի բարձրացմանը.

15) ուղղորդում և փաստաթղթավորում՝ տեխնիկական կառավարման գործընթաց և վարչական միջոցառումների ամբողջություն՝ սոցիալական աշխատանքի ոլորտը կարգավորող օրենսդրությանը և սոցիալական աշխատանքի մասնագիտական չափորոշիչներին համապատասխան.

16) ընտանեկան միջամտություն՝ միջանձնային խնդիրներ ունեցող ընտանիքների հետ սոցիալական աշխատանքի մասնագետի հաղորդակցման գործընթաց, որի ընթացքում սոցիալական աշխատանքի մասնագետը ընտանիքի կոնֆլիկտի կողմերի հետ համատեղ փորձում է ընդհանուր դիրքորոշման հասնել ընտանեկան հարաբերություններին առնչվող հարցերի շուրջ, ինչպիսիք են՝ երեխաների հետ հարաբերությունները, ամուսնալուծությունը, ֆինանսական խնդիրները և այլն.

17) հանրային (հասարակության) իրազեկում՝ շահառուների, ինչպես նաև համայնքի սոցիալական կարիքների վերհանում, դրանց բավարարման, տեղական սոցիալական ծրագրերի մշակման և իրականացման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցող տեղեկատվության նախապատրաստում և դրա տրամադրում համայնքի տարածքում գործող աջակցող ցանցի մասնակիցներին և համայնքի բնակչությանը.

18) համագործակցություն՝ շահառուի դեպքին առնչվող այլ կառույցների, անձանց, ինչպես նաև զանգվածային լրատվական միջոցների հետ (վերջիններիս պարագայում՝ նաև լուսաբանվող նյութերում էթիկական հարցերում զգուշություն ցուցաբերելու, նորմերի պահպանության իմաստով) համատեղ գործընթաց, որն ուղղված է սույն օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված նպատակների իրականացմանը.

19) սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցառումների իրականացում։

## Գ Լ ՈՒ Խ 3

## *ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԸ*

### Հոդված 8. Սոցիալական աշխատանքի մասնագետները

1. Սոցիալական աշխատանքի մասնագետներն են սոցիալական

աշխատողն ու սոցիալական սատարողը:

2. Սոցիալական աշխատողի մասնագիտական գործունեություն իրականացնելու իրավունք ունի «Սոցիալական աշխատանք» մասնագիտությամբ բարձրագույն կրթություն ունեցող, հայերենին տիրապետող և սոցիալական աշխատողի հավաստագիր ունեցող գործունակ ֆիզիկական անձը:
3. Սոցիալական աշխատող կարող է լինել նաև այլ բարձրագույնմասնագիտական կրթություն ունեցող և «Սոցիալական աշխատանք»մասնագիտության հատուկ դասընթացներ ավարտած, համապատասխան վկայական ստացած հայերենին տիրապետող և սոցիալական աշխատողի հավաստագիր ունեցող գործունակ ֆիզիկական անձը:
4. Սոցիալական սատարողի մասնագիտական գործունեություն իրականացնելու իրավունք ունի «Սոցիալական աշխատանք» մասնագիտությամբ միջին կամ նախնական մասնագիտական կրթություն ունեցող, հայերենին տիրապետող և սոցիալական սատարողի հավաստագիր ունեցող գործունակ ֆիզիկական անձը:
5. Սոցիալական սատարող կարող է լինել նաև այլ միջին կամ նախնականմասնագիտական կրթություն ունեցող և «Սոցիալական աշխատանք»մասնագիտության հատուկ դասընթացներ ավարտած, համապատասխան վկայական ստացած հայերենին տիրապետող և սոցիալական սատարողի հավաստագիր ունեցող գործունակ ֆիզիկական անձը:
6. Սոցիալական աշխատանքի մասնագետ չի կարող հանդիսանալ այն անձը, որը՝

1) դատարանի վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) դատապարտվել է դիտավորությամբ կատարված հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը օրենքով սահմանված կարգով մարված կամ հանված չէ.

3) ունի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված այնպիսի հիվանդություն, որը կարող է խոչընդոտել սոցիալական աշխատանքի մասնագետի կողմից իր պարտականությունների կատարմանը և լիազորությունների իրականացմանը:

7. Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններում, պետական և տեղական ինքնակառավարման այլ մարմիններում որպես սոցիալական աշխատանքի մասնագետ աշխատելու (քաղաքացիական ծառայության կամ համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու) համար, սոցիալական աշխատանքի մասնագետը պետք է բավարարի նաև Հայաստանի Հանրապետության օրենքներով և տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները:
8. Սույն հոդվածի 3-րդ և 5-րդ մասերով սահմանված «Սոցիալական աշխատանք» մասնագիտության հատուկ դասընթացների ծրագրերը, թեմաները կազմում է պատասխանատու կազմակերպությունը և հաստատում է սոցիալական աջակցության բնագավառում

կառավարության լիազորած պետական մարմինը (այսուհետ՝ լիազորած պետական մարմին)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած սոցիալական աշխատանքի մասնագետների որակավորման կրեդիտային միավորների սանդղակի հիման վրա: Հավաստագրման համար անհրաժեշտ կրեդիտային միավորների քանակը, ինչպես նաև կրեդիտային միավորների հաշվարկման ընթացակարգը սահմանվում է լիազորած պետական մարմնի ղեկավարի կողմից հաստատած ընթացակարգով:

9. Այլ պետության կրթական հաստատությունների կողմից տրված՝ կրթության որակավորումների (որակավորման աստիճանների) և փաստաթղթերի համեմատելիությունը, ճանաչումն ու համարժեքության հաստատումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
10. Սոցիալական դեպք վարելու իրավունք ունի միայն սոցիալական աշխատողը:
11. Սոցիալական աշխատանքի մասնագետին տրվում է սոցիալական աշխատողի կամ սոցիալական սատարողի վկայական՝ «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում:

**Հոդված 9. Սոցիալական աշխատողի իրավունքներն ու պարտականությունները**

1. Սոցիալական աշխատողը՝

1) տիրապետում է շահառուի սոցիալական իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանն առնչվող Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նրա սոցիալական կարիքների գնահատման, այդ կարիքների բավարարմանն ուղղված անհատական սոցիալական ծրագրերի կազմման մեթոդներին ու տեխնիկային, առկա ռեսուրսների և հնարավորությունների մասին տեղեկատվությանը, ունի սոցիալական աշխատանքի տեսական և պրակտիկ գիտելիքներ.

2) համագործակցում է աջակցող ցանցի մասնակիցների հետ:

2. Սոցիալական աշխատողն իրավունք ունի՝

1) ազատորեն ընտրել և կիրառել սոցիալական աշխատանքում ընդունված, սոցիալական աշխատանքի բնագավառի օրենսդրությանը և կանոնագրքին համապատասխանող մոտեցումները, մեթոդները, տեխնիկաները և մոդելները, որոնք իր գնահատմամբ առավել արդյունավետ են ակնկալվող արդյունքի և իրականացման ժամկետների տեսանկյունից.

2) դիմելու պետական, տեղական ինքնակառավարման մարմիններին, ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ շահառուներին սոցիալական ծառայություններ տրամադրելու համար անհրաժեշտ աջակցություն ստանալու նպատակով.

3) սոցիալական դեպքի վարման շրջանակում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հարցմամբ դիմելու պետական,

տեղական ինքնակառավարման մարմիններին, ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ շահառուի սոցիալական կարիքների բավարարման, անհատական սոցիալական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր ստանալու նպատակով, բացառությամբ, երբ պահանջվող տեղեկությունները և փաստաթղթերը պարունակում են օրենքով պահպանվող գաղտնիք.

4) ներկայացնել առաջարկություններ անհատական սոցիալական ծրագրում ներառման ենթակա միջոցառումների, սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի հայեցողական լիազորությունների շրջանակներում որոշումների կայացման վերաբերյալ.

5) իրականացնել իրազեկման և կազմակերպական միջոցառումներ՝ աջակցող ցանցում սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպություններին, տարածքային կառավարման պետական մարմիններին, տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև ֆիզիկական անձանց ներգրավելու նպատակով.

6) սոցիալական աշխատանքի իրականացման ընթացքում՝ առանձին, խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել հանդիպելու շահառուի հետ, եթե դա բխում է շահառուի շահերից և այլ բան նախատեսված չէ օրենքով.

7) իրականացնել շահառուի շահերից բխող այլ գործողություններ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, կամ դա չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը.

8) սահմանված կարգով և ժամաքանակով մասնակցել սույն օրենքով նախատեսված վերապատրաստման դասընթացներին.

9) դիմել պատասխանատու կազմակերպությանն իր աշխատանքային մասնագիտական գործունեությունը սոցիալական աշխատանքի չափորոշիչներին և կանոնագրքին համապատասխանելու մասին մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով:

3. Սոցիալական աշխատողը պարտավոր է՝

1) պահպանել սույն օրենքի, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, կանոնագրքի պահանջները.

2) պաշտպանել շահառուի իրավունքներն ու օրինական շահերը, չկատարել շահառուի օրինական շահերին հակասող որևէ գործողություն.

3) իր գործառույթներն իրականացնել բարեխիղճ և պատշաճ կերպով.

4) ապահովել շահառուի ներգրավվածությունը և ակտիվ մասնակցությունն իր խնդիրների լուծման գործընթացին, որոշումների կայացմանը՝ զարգացնելով շահառուի սոցիալական հմտությունները և ինքնիրացումը (ինքնորոշումը).

5) գնահատել շահառուի սոցիալական կարիքները.

6) կազմել շահառուի անհատական սոցիալական ծրագիրը՝ ներգրավելով աջակցող ցանցի մասնակիցների մասնագետներին.

7) օգտագործել տվյալ տարածաշրջանում առկա աջակցող ցանցը՝ անհատական սոցիալական ծրագիր կազմելու և իրականացնելու նպատակով.

8) համակարգել անհատական սոցիալական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը, կազմակերպել խմբային (բազմամասնագիտական) քննարկումներ և ուղղորդել շահառուին տարբեր կազմակերպություններ՝ իրենց իրավունքների մասին իրազեկելու, ինչպես նաև դրանք իրականացնելու համար.

9) ստանձնել միջնորդի դեր տարբեր և երբեմն միմյանց հակասող շահեր ունեցող կազմակերպությունների միջև՝ ապահովելով կազմակերպությունների միջև համագործակցությունը և տեղեկատվության փոխանակումը, ինչպես նաև շահառուի օրինական շահերի պաշտպանության առաջնային դերը.

10) կազմակերպությունների և համայնքի սոցիալական աշխատանքի մասնագետի հետ համատեղ մշակել կանխարգելող ծրագրեր՝ ուղղված համայնքներում բացահայտված ռիսկերի նվազեցմանը, սոցիալական իրավունքների կոլեկտիվ պաշտպանության մեխանիզմների ձևավորման խթանմանը և պաշտպանությանը.

11) ապահովել անձանց համար սոցիալական ծառայությունների տրամադրման հավասար հնարավորություններ.

12) պահանջել շահառուից միայն սոցիալական ծառայությունների տրամադրման համար անհրաժեշտ տեղեկություններ, աջակցել անհրաժեշտ փաստաթղթերի (տվյալների) ճիշտ ներկայացմանը.

13) աջակցել շահառուների սոցիալական ծառայություններ ստանալու իրավունքի իրականացմանը.

14) մշտապես կատարելագործել իր գիտելիքները.

15) չհրապարակել կամ որևէ այլ կերպ չտարածել սոցիալական ծառայությունների տրամադրման ընթացքում իրեն հայտնի դարձած անձնական տեղեկությունները (մասնագիտական գաղտնիքը), բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված դեպքերի.

16) նպաստել հասարակության կողմից սոցիալական աշխատանքի նկատմամբ վստահության աճին և ամրապնդմանը:

4. Սույն հոդվածով սահմանվում են սոցիալական աշխատողի իրավունքների և պարտականությունների ողջ ծավալը, իսկ մասնագիտական գործունեություն իրականացնող սոցիալական աշխատողի իրավունքների և պարտականությունների շրջանակը սահմանվում է նրա պաշտոնի անձնագրով (աշխատատեղի

նկարագրով) կամ տրամադրվող ծառայության նկարագրով՝ գործատուի կողմից կամ քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա:
5. Սոցիալական աշխատողն ունի սույն օրենքով, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ օրենքներով իրեն վերապահված այլ իրավունքներ և պարտականություններ:

**Հոդված 10. Սոցիալական սատարողի իրավունքներն ու պարտականությունները**

1. Սոցիալական սատարողն ունի սույն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-րդ, 6-9-րդ կետերով սահմանված իրավունքները:
2. Սոցիալական սատարողը կրում է սույն օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 1-4-րդ և 12-16-րդ կետերով սահմանված պարտականությունները:
3. Սույն հոդվածով սահմանվում են սոցիալական սատարողի իրավունքների և պարտականությունների ողջ ծավալը, իսկ մասնագիտական գործունեություն իրականացնող սոցիալական սատարողի իրավունքների և պարտականությունների շրջանակը սահմանվում է նրա պաշտոնի անձնագրով կամ աշխատանքի նկարագարով՝ գործատուի կողմից կամ քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա:
4. Սոցիալական սատարողն ունի սույն օրենքով, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ օրենքներով իրեն վերապահված այլ իրավունքներ և պարտականություններ:

**Հոդված 11. Սոցիալական աշխատանքի մասնագետների գործունեության երաշխիքները**

1. Սոցիալական աշխատանքի մասնագետի դիմումի հիման վրա, պետական իրավասու մարմինները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պարտավոր են ձեռնարկել սոցիալական աշխատանքի մասնագետի և նրա ընտանիքի պաշտպանության համար անհրաժեշտ՝ օրենքով սահմանված միջոցներ, եթե իր մասնագիտական գործունեության կատարման հետ կապված՝ սոցիալական աշխատանքի մասնագետին կամ նրա ընտանիքի անդամներին սպառնացել են բռնությամբ, գույքի ոչնչացմամբ կամ այլ անօրինական գործողություններով:
2. 2. Գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող սոցիալական աշխատանքի մասնագետը, սույն օրենքով սահմանված վերապատրաստման ողջ ժամանակահատվածում պահպանում է պաշտոնը և վարձատրությունը:
3. 3. Քաղաքացիական ծառայության կամ համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող սոցիալական աշխատանքի մասնագետներն ունեն քաղաքացիական և համայնքային ծառայությունը կարգավորող օրենքներով նախատեսված այլ երաշխիքներ:
4. 4. Հայաստանի Հանրապետության օրենքներով կարող են սահմանվել սոցիալական աշխատանքի մասնագետների գործունեության այլ երաշխիքներ:

**Հոդված 12. Կանոնագիրքը**

1. Կանոնագիրքը սահմանում էսոցիալական աշխատանքի մասնագետի վարքագծի միասնական կանոնները և սոցիալական աշխատանքի էթիկայի սկզբունքները, որոնք պարտադիր են սոցիալական աշխատանքի բոլոր մասնագետների համար:
2. Կանոնագիրքը հաստատում է լիազորած պետական մարմինը՝ պատասխանատու կազմակերպության ներկայացմամբ:

**Գ Լ ՈՒ Խ 4**

***ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ***

**Հոդված 13. Սոցիալական աշխատանքի չափորոշիչները**

1. Սոցիալական աշխատանքի չափորոշիչները սահմանվում են լիազորած պետական մարմնի կողմից:
2. Սոցիալական աշխատանքի չափորոշիչները «սոցիալական աշխատանք» մասնագիտությամբ մասնագիտական կրթությանը, սոցիալական աշխատանքի մասնագետների պրակտիկային, սոցիալական աշխատանքի սուպերվիզիային առաջադրվող պահանջների, վարքագծի միասնական կանոնների ևսոցիալական աշխատանքի էթիկայի սկզբունքների, դրանց խախտման դեպքում կիրառվող ընթացակարգերը նկարագրող դրույթների ամբողջությունն են:
3. Սոցիալական աշխատանքի չափորոշիչները մշակում և լիազորած պետական մարմնին է ներկայացնում պատասխանատու կազմակերպությունը:

**Հոդված 14. Պատասխանատու կազմակերպությանը ներկայացվող պահանջները**

1. Պատասխանատու կազմակերպությունը Միավորված ազգերի կազմակերպության Տնտեսական և սոցիալական խորհրդում հատուկ խորհրդատվական կարգավիճակ ունեցող, Աշխատանքի միջազգային կազմակերպությանը, Միավորված Ազգերի Կազմակերպության մանկական հիմնադրամում, Եվրախորհրդում և Եվրամիությունում հավատարմագրված սոցիալական աշխատողների միջազգային ֆեդերացիային, սոցիալական աշխատանքի դպրոցների Եվրոպական անդամագրված սոցիալական աշխատողների հասարակական միավորում է:
2. Կառավարությունը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջին բավարարող կազմակերպությանը սույն օրենքով պատասխանատու կազմակերպությանը վերապահված լիազորությունների իրականացման իրավունքը տալիս է հինգ տարի ժամկետով, իսկ պահանջին բավարարող կազմակերպություն չլինելու դեպքում՝ սահմանում է պատասխանատու կազմակերպություն ընտրելու չափորոշիչներն ու կարգը:

**Հոդված 15. Պատասխանատու կազմակերպությունը**

1. 1. Պատասխանատու կազմակերպությունն իր գործունեությունը իրականացնում է իր կազմակերպական իրավական ձևի գործունեությունը կարգավորող օրենքներով և սույն օրենքով սահմանված կարգով:
2. 2. Սույն օրենքի իմաստով պատասխանատու կազմակերպության գործունեության

1) հիմնական նպատակը «Սոցիալական աշխատանք» մասնագիտության զարգացմանն աջակցելն է, սոցիալական աշխատանքի մասնագետների իրավունքների և շահերի պաշտպանությունը, նրանց գործունեության արդյունավետության բարձրացմանը նպաստելը, սոցիալական աշխատանքի մասնագետների կողմից վարքագծի կանոնների և սոցիալական աշխատանքի էթիկայի սկզբունքների պահպանման նկատմամբ հսկողության ապահովումը:

2) հիմնական խնդիրներն են՝

ա. սոցիալական աշխատանքի մասնագետների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների (այդ թվում՝ օտարերկրյա) հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դատարանում.

բ. մասնակցությունը սոցիալական աշխատանքի մասնագետների հավաստագրման գործընթացի, ինչպես նաև վերապատրաստման կազմակերպմանը, սույն օրենքի և կանոնագրքի պահանջների պահպանման նկատմամբ հսկողության իրականացմանը.

գ. սոցիալական աշխատանքի մասնագետների մասնագիտական գործունեության, այդ թվում՝ սոցիալական դեպքի վարման նկատմամբ անկախ մշտադիտարկման (մոնիթորինգի) իրականացումը.

դ. աջակցությունը սուպերվիզիայի իրականացմանը կամ դրա կազմակերպմանը.

ե. սոցիալական աշխատանքի մասնագետների մասնագիտական գործունեության լուսաբանումը.

զ. հասարակությունում սոցիալական աշխատանքի արժևորման գիտակցման և հեղինակության բարձրացմանը նպաստելը.

է. սոցիալական աշխատանքի մասնագետների համար կարևոր նշանակություն ունեցող հիմնահարցերի լուծմանն աջակցելը.

ը. սոցիալական աշխատանքի նորարական մեթոդների ներդրմանն ու տարածմանը նպաստելը.

թ. պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների, ինչպես նաև այլ երկրների սոցիալական աշխատանքի մասնագետների կառույցների, մասնագիտական ասոցիացիաների, մասնագիտական և գիտական ինստիտուտների, բարձրագույն ուսումնական հաստատությունների,

օտարերկրյա և միջազգային այլ կազմակերպությունների հետ համագործակցությունը.

ժ. «Սոցիալական աշխատանք» մասնագիտության զարգացմանն աջակցելը:

3) հիմնական գործառույթններն են

ա. լիազորած պետական մարմնի սահմանմանը ներկայացնել սոցիալական աշխատանքի չաքփորոշիչները, սոցիալական աշխատանքի մասնագետների մասնագիտական վերապատրաստման, «Սոցիալական աշխատանք» հատուկ դասընթացների ծրագրերը, թեմաները և ժամաքանակը, հավաստագրման քննությունների թեմաները, թեստերին ներկայացվող պահանջները, գնահատման չափանիշները, սուպերվիզիայի իրականացման մասնագիտական չափորոշիչները՝ ղեկավարվելով կառավարության սահմանած սոցիալական աշխատանքի մասնագետների որակավորման կրեդիտային միավորների սանդղակով.

բ. մասնագիտական եզրակացության տրամադրումը սույն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով սահմանված կարգով՝ սույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված սոցիալական աշխատանքի մասնագետների գործողությունը՝ սոցիալական աշխատանքի չափորոշիչներին համապատասխանելու վերաբերյալ:

**Հոդված 16. Սոցիալական աշխատանքի մասնագետների հավաստագրման <u>հանձնաժողովը</u>**

1. Սոցիալական աշխատանքի մասնագետների հավաստագրման հանձնաժողովը կազմավորվում է սոցիալական աշխատանքի մասնագետների հավաստագրման քննությունները կազմակերպելու և դրանց արդյունքներն ամփոփելու նպատակով:
2. Սոցիալական աշխատանքի մասնագետների հավաստագրման հանձնաժողովը կազմավորվում է երեք տարի ժամկետով՝ ինն անդամի կազմով, ներկայացուցչության հետևյալ համամասնությամբ՝

1) երեք անդամ՝ թեկնածությունները ներկայացնում է պատասխանատու կազմակերպությունը.

2) չորս անդամ՝ թեկնածությունները ներկայացնում են Հայաստանի Հանրապետության սոցիալական աշխատանքի մասնագիտական ուսուցում իրականցնող բարձրագույն ուսումնական հաստատությունները.

3) երկու անդամ՝ ներկայացնում է լիազորած պետական մարմինը:

3. Սոցիալական աշխատանքի մասնագետների հավաստագրման հանձնաժողովի անհատական կազմը հաստատում է լիազորած պետական մարմնի ղեկավարը՝ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով ներկայացված թեկնածուներից՝ կիրառելով առաջնահերթության հետևյալ սկզբունքները.

1) ավելի բարձր գիտական կոչում ունենալը.

2) մասնագիտական աշխատանքային ավելի մեծ ստաժ ունենալը:

4. Սոցիալական աշխատանքի մասնագետների հավաստագրման հանձնաժողովի նախագահին ընտրվում է լիազորած պետական մարմնի ներկայացուցիչներից՝ ձայների պարզ մեծամասնությամբ:
5. Սոցիալական աշխատանքի մասնագետների հավաստագրման հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է հանձնաժողովի անդամներից առնվազն հինգը:
6. Սոցիալական աշխատանքի մասնագետների հավաստագրման հանձնաժողովի աշխատանքները կազմակերպում է լիազորած պետական մարմնի աշխատակազմը, այդ նպատակով նախապատրաստում է հավակնորդների հավաստագրման քննությունների անցակացումը, ինչպես նաև այլ կազմակերպական աշխատանքներ:
7. 7. Սոցիալական աշխատանքի մասնագետների հավաստագրման հանձնաժողովն իրականացնում է

1) քննությունների և դրանց արդյունքների ստուգման հետ կապված՝ սույն օրենքով և լիազորած պետական մարմնի կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ.

2) ընդունում է քննությունների անցկացման հետ կապված որոշումներ:

8. 8. Սոցիալական աշխատանքի մասնագետների հավաստագրման հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեարկության արդյունքում ձայների հավասար լինելու դեպքում որոշումն ընդունվում է հավակնորդի օգտին:
9. 9. Սոցիալական աշխատանքի մասնագետների հավաստագրման հանձնաժողովի նիստերը հրավիրում է հանձնաժողովի նախագահը: Հանձնաժողովի նախագահը՝

1) ղեկավարում է հանձնաժողովի աշխատանքները, հրավիրում և վարում է հանձնաժողովի նիստերը.

2) իրականացնում է հսկողություն հավաստագրման քննությունների անցկացման ընթացքի նկատմամբ:

**Գ Լ ՈՒ Խ 5**

***ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐՈՒՄԸ***

**Հոդված 17. Հավաստագիր ստանալու համար ներկայացվող պահանջները**

1. Սոցիալական աշխատողի հավաստագիր կարող է ստանալ այն գործունակ ֆիզիկական անձը, որը բավարարում է ստորև նշված պահանջներից որևէ մեկին՝

1) ունի «Սոցիալական աշխատանք» մասնագիտությամբ բարձրագույն կրթություն, տիրապետում է հայերենին՝ առանց հավաստագրման քննության,

եթե որակավորում ստանալու կամ սոցիալական աշխատանքի պրակտիկ գործունեությամբ զբաղվելու վերջին տարվանից չի անցել հինգ տարի.

2) ունի «Սոցիալական աշխատանք» մասնագիտությամբ բարձրագույն կրթություն, տիրապետում է հայերենին և սոցիալական աշխատանքի պրակտիկ գործունեությամբ չի զբաղվել դիմելու տարվան նախորդող հինգ տարիների ընթացքում և հանձնել է հավաստագրման քննություն.

3) ունի այլ բարձրագույն մասնագիտական կրթություն և ավարտել է «Սոցիալական աշխատանք» մասնագիտության հատուկ դասընթաց և հանձնել է հավաստագրման քննություն:

2. Սոցիալական սատարողի հավաստագիր կարող է ստանալ այն գործունակ ֆիզիկական անձը, որը բավարարում է ստորև նշված պահանջներից որևէ մեկին`

1) ունի «Սոցիալական աշխատանք» մասնագիտությամբ միջին կամ նախնական կրթություն, տիրապետում է հայերենին` առանց հավաստագրման քննության, եթե որակավորում ստանալու կամ սոցիալական աշխատանքի պրակտիկ գործունեությամբ զբաղվելու վերջին տարվանից չի անցել երեք տարի.

2) ունի «Սոցիալական աշխատանք» մասնագիտությամբ միջին կամ նախնական կրթություն, տիրապետում է հայերենին և սոցիալական աշխատանքի պրակտիկ գործունեությամբ չի զբաղվել դիմելու տարվան նախորդող հինգ տարիների ընթացքում և հանձնել է հավաստագրման քննություն.

3) ունի այլ միջին կամ նախնական մասնագիտական կրթություն և ավարտել է «Սոցիալական աշխատանք» մասնագիտության հատուկ դասընթաց և հանձնել է հավաստագրման քննություն:

3. Սուպերվիզորի հավաստագիր կարող է ստանալ այն գործունակ ֆիզիկական անձը, որն ունի սոցիալական աշխատանքի առնվազն տասը տարվա մասնագիտական ստաժ և հանձնել է սուպերվիզորի հավաստագրման քննություն:
4. Սույն օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետը լրանալու դեպքում հավաստագիրը տրվում է առանց հավաստագրման քննության, եթե սոցիալական աշխատանքի մասնագետն այդ ժամկետում հավաքել է անհրաժեշտ կրեդիտային միավորներ:

**Հոդված 18. Հավաստագրման քննությունը**

1. Հավաստագիր ստանալու համար հավակնորդը հանձնում է քննություն: Քննությունն անցկացվում է առնվազն տարին մեկ անգամ: Քննությունն ընդունում է սոցիալական աշխատանքի մասնագետների հավաստագրման հանձնաժողովը:
2. Լիազորած պետական մարմինը հավաստագրման քննությունների անցկացման մասին տեղեկացնում է իր պաշտոնական կայքի միջոցով` հայտարարության հրապարակմամբ ոչ ուշ, քան քննություններն

անցկացնելու օրվանից երեք ամիս առաջ:

3. Քննությունների անցկացման մասին հայտարարությունում, ի թիվս այլ տեղեկությունների, նշվում են քննությունների անցկացման վայրը, սկիզբը, տևողությունը, քննություններին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, դրանց ներկայացնելու վերջնաժամկետը և վայրը:
4. Քննություն հանձնելու համար հավակնորդի դիմելու կարգը, պահանջվող փաստաթղթերի և տվյալների ցանկը, քննությունների կազմակերպման կարգը, քննությանը մասնակցելու համար նախատեսված վճարի չափը, այն վճարելու կարգը և հավաստագրի ձևը սահմանում է լիազորած պետական մարմինը:
5. Հավաստագրման քննության արդյունքները կարող են բողոքարկվել դատական կարգով` քննության արդյունքների հրապարակումից հետո` մեկ ամսվա ընթացքում:

**Հոդված 19. Հավաստագիր տրամադրելու կարգը**

1. Հավաստագիր ստանալու համար հավակնորդը լիազորած պետական մարմին է ներկայացնում դիմում հավաստագրման քննություն հանձնելու մասին:
2. Հավաստագրման քննություն հանձնած անձը հնգօրյա ժամկետում ստանում է լիազորած պետական մարմնի կնիքով և ղեկավարի ստորագրությամբ վավերացված հավաստագիր:
3. Հավաստագիրը տրվում է վեց տարի ժամկետով` առանց տարիքային սահմանափակման։
4. Հավաստագրի կորստի (կորցնելու, ոչնչացնելու և այլն) կամ օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքում սոցիալական աշխատանքի մասնագետն այդ մասին դիմում է ներկայացնում լիազորած պետական մարմին` դիմումի հետ մեկտեղ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ: Լիազորած պետական մարմինը կարող է սահմանել դիմումին կից անհրաժեշտ այլ փաստաթղթեր ներկայացնելու պահանջ:
5. Լիազորած պետական մարմինը հավաստագրի կրկնօրինակն անձին է տրամադրում դիմումը ներկայացնելուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում: Հավաստագրի կրկնօրինակի վերին աջ անկյունում կատարվում է «Կրկնօրինակ» նշագրումը:

**Հոդված 20. Հավաստագրի գործողության դադարեցումը**

1. Հավաստագրի գործողությունը դադարեցվում է, եթե

1) սոցիալական աշխատանքի մասնագետը

ա. գրավոր դիմում է լիազորած պետական մարմնին` հավաստագրի գործողությունը դադարեցնելու համար.

բ. հավաստագիր է ստացել սույն օրենքի պահանջների խախտմամբ.

գ. մահացել է կամ ուժի մեջ է մտել նրան մահացած ճանաչելու մասին դատարանի ակտը.

2) եթե առաջացել է սույն օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված հանգամանքներից որևէ մեկը.

3) առկա է սույն օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված 2-րդ եզրակացությունը 12 ամիսների ընթացքում.

4) լրացել է հավաստագրի գործողության ժամկետը և մինչ այդ ժամկետի լրանալը, անձը չի հավաքել անհրաժեշտ կրեդիտային միավորներ:

2. Հավաստագրի գործողությունը դադարեցվում է այն ուժը կորցրած ճանաչելու միջոցով: Հավաստագրի գործողությունը դադարեցնում է լիազորած պետական մարմինը:
3. Հավաստագրի գործողությունը դադարեցնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**Գ Լ ՈՒ Խ 6**

***ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ***

**Հոդված 21. Սոցիալական աշխատանքի մասնագետների վերապատրաստման կազմակերպումը**

1. Սոցիալական աշխատանքի մասնագետներն իրավունք ունեն մասնակցել մասնագիտական վերապատրաստումներին՝ գիտելիքների պարբերական թարմացման և սոցիալական աշխատանքի բնագավառի վերջին զարգացումներին և բացահայտումներին համապատասխան նոր գիտելիքների և հմտությունների ձեռք բերման նպատակով:
2. Սոցիալական աշխատանքի մասնագետների վերապատրաստումը կարող են կազմակերպել լիազորած պետական մարմինը՝ «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով, պատասխանատու կազմակերպությունը և լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացնող այլ հաստատությունները՝ սույն օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի «ա» ենթակետով հաստատված ծրագրերով:
3. Վերապատրաստման ընթացքում գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող սոցիալական աշխատանքի մասնագետի բացակայությունը համարվում է հարգելի:

**Հոդված 22. Պատասխանատու կազմակերպության մասնագիտական եզրակացությունը**

1. Պատասխանատու կազմակերպության ձևավորած մասնագիտական աշխատանքային խումբը սոցիալական աշխատանքի մասնագետի գործողությունը (անգործությունը) սոցիալական աշխատանքի չափորոշիչներին համապատասխանելու հարցի ուսումնասիրության արդյունքների հիման վրա պատրաստում է եզրակացություն, որը պարունակում է

1) նկարագրական մաս՝

ա. սոցիալական աշխատանքի մասնագետի անունը, ազգանունը, հայրանունը, հավաստագրի համարը, գործողության ժամկետը.

բ. ուսումնասիրություն կատարելու հիմքը՝ գործատուի գրությունը, սոցիալական աշխատանքի մասնագետի դիմումը, պատասխանատու կազմակերոության նախաձեռնությունը.

գ. ուսումնասիրության սկիզբը և ավարտը՝ օր, ամիս, տարի.

դ. մասնագիտական եզրակացություն ստանալու պահանջի հիմք հանդիսացած հանգամանքների (գործողությունների) նկարագիրը.

ե. սոցիալական աշխատանքի և (կամ) կանոնագրքի այն դրույթները, որոնց համապատասխանում կամ հակասում են սույն կետի «դ» ենթակետով նկարագրված հանգամանքները (գործողությունները):

2) բուն եզրակացություն՝

ա. սոցիալական աշխատանքի մասնագետի գործողությունը (անգործությունը) համապատասխանում է սոցիալական աշխատանքի չափորոշիչներին և (կամ) կանոնագրքի  պահանջներին.

բ.  սոցիալական աշխատանքի մասնագետի գործողությունը (անգործությունը) չի համապատասխանում սոցիալական աշխատանքի չափորոշիչներին և (կամ) կանոնագրքի  պահանջներին:

**Գ Լ ՈՒ Խ  7**

***ՍՈՒՊԵՐՎԻԶԻԱՆ***

**Հոդված 23. Սուպերվիզիայի իրականացումը**

1. Պատասխանատու կազմակերպությունը իրականացնում է արտաքին սուպերվիզիա՝

1) սույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված սոցիալական աշխատանքի մասնագետների համար՝ համապատասխան գործատուի հայտի հիման վրա.

2) կազմակերպության կամ հրավիրված սոցիալական աշխատանքի մասնագետների միջոցով:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հայտը կարող է լինել՝

1) նպատակային՝ նեղ մասնագետ գործուղելու պահանջով կամ ընդհանուր.

2) կարճաժամկետ՝ մեկօրյա (մեկանգամյա հանդիպում) կամ երկարաժամկետ՝ ոչ ավելի 5 աշխատանքային օր, տևողությամբ:

3. Սույն օրենքով սահմանված կարգով սուպերվիզորի հավաստագիր ունեցող անձի գործատուն պարտավոր է ձեռնարկել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բավարար միջոցներ՝ նրա որպես սուպերվիզոր մասնագիտական պարտականությունների կատարման համար:

## Գ Լ ՈՒ Խ 8

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### Հոդված 24. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո տաս աշխատանքային օրվա ընթացքում լիազորած պետական մարմինը իր պաշտոնական և www.azdarar.am կայք էջերում հայտարարություն է տեղադրում սույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված պահանջներին բավարարող կազմակերպությունների հայտագրման մասին՝ նշելով հայտագրման վեց ամիս ժամկետը:
2. Մինչև 2022 թվականի հունվարի 1-ն առանց հավաստագրման քննություն հանձնելու`

1) սոցիալական աշխատողի հավաստագիր կարող է ստանալ նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող այն գործունակ անձը, որն ունի այլ մասնագիտությամբ բարձրագույն կրթություն, սոցիալական ոլորտում աշխատանքի առնվազն տաս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ և տիրապետում է հայերենին.

2) սոցիալական սատարողի հավաստագիր կարող է ստանալ նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող այն գործունակ անձը, որն ունի այլ միջին կամ նախնական մասնագիտական կրթություն, սոցիալական ոլորտում աշխատանքի առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ և տիրապետում է հայերենին:

3. 3. Մինչև 2022 թվականի հունվարի 1-ը սոցիալական աշխատողի հավաստագիր ստանալու քննություն կարող է հանձնել և սոցիալական աշխատողի հավաստագիր ստանալ նաև այլ մասնագիտությամբ բարձրագույն կրթություն ունեցող, «Սոցիալական աշխատանք» մասնագիտության հատուկ դասընթացներն ավարտած, համապատասխան վկայական ստացած գործունակ ֆիզիկական անձը, որը տիրապետում է հայերենին:
4. 4. Մինչև 2022 թվականի հունվարի 1-ը սոցիալական սատարողի հավաստագիր ստանալու համար քննություն կարող է հանձնել և սոցիալական սատարողի հավաստագիր ստանալ նաև այլ միջին կամ նախնական մասնագիտական կրթություն ունեցող և «Սոցիալական աշխատանք» մասնագիտության հատուկ դասընթացներ ավարտած,համապատասխան վկայական ստացած գործունակ ֆիզիկական անձը, որը տիրապետում է հայերենին:
5. 5. Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններում, սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպություններում, պետական և տեղական

ինքնակառավարման մարմիններում և այլ կազմակերպություններում (անկախ կազմակերպական-իրավական ձևից) սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվան նախորդող օրվա դրությամբ աշխատող սոցիալական աշխատանքի մասնագետները, որոնք չունեն սույն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ կամ 4-րդ մասերով սահմանված համապատասխան կրթություն կամ չեն անցել սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված «Սոցիալական աշխատանք» մասնագիտության հատուկ դասընթացները, այդ դասընթացները պետք է ավարտեն սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո առավելագույնը տասնութ ամսվա ընթացքում:

6. 6. Սոցիալական աշխատանքի այն մասնագետները, որոնք սոցիալական աշխատանքը որպես գործատուի մոտ վարձու աշխատանքային գործունեություն կամ որպես քաղաքացիաիրավական պայմանագրով ծառայությունների մատուցում (կամ աշխատանքների կատարում) սկսել են իրականացնել սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո և չունեն սույն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ կամ 4-րդ մասերով սահմանված համապատասխան կրթություն կամ չեն անցել սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված «Սոցիալական աշխատանք» մասնագիտության հատուկ դասընթացները, այդ դասընթացները պետք է ավարտեն սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո առավելագույնը տասներկու ամսվա ընթացքում:

**Հոդված 25. Օրենքի ուժի մեջ մտնելը**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում ------------- -ին:

***ՆԱԽԱԳԻԾ***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-231-Ն օրենքի (այսուհետ` Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետում, «սույն օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված մասնագիտական գործունեություն» բառերը փոխարինել «ըստ «Սոցիալական աշխատանքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի» բառերով:

**Հոդված 2.** Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 22-24-րդ կետերով հետևյալ բովանդակությամբ.

«22) **սոցիալական աշխատանքի մասնագետ**` ըստ «Սոցիալական աշխատանքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի.

23) **սոցիալական աշխատանքի չափորոշիչներ**` ըստ «Սոցիալական

աշխատանքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի.

24) **կանոնագիրք**՝ ըստ «Սոցիալական աշխատանքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:»

**Հոդված 3.** Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասը «սկզբունքներին» բառից հետո լրացնել «, ինչպես նաև սոցիալական աշխատանքի չափորոշիչներին և կանոնագրքին» բառերով:

**Հոդված 4**. Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետը «մարմիններից» բառից հետո լրացնել «, ինչպես նաև կազմակերպություններից» բառերով:

**Հոդված 5.** Օրենքի 8-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«Գ Լ ՈՒ Խ 8 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ »:

**Հոդված 6.** Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 38-րդ, 39-րդ հոդվածները, 46-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերը :

**Հոդված 7.** Օրենքի 40-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասից հանել «, որը սոցիալական դեպք վարողն է,» բառերը:
2. 3-րդ մասը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«3. Լիազորած պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմնի սոցիալական աշխատողն ունի սույն օրենքով, «Սոցիալական աշխատանքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով սահմանված իրավունքները և կրում է սույն օրենքով, «Սոցիալական աշխատանքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված պարտականությունները:»:

3. 4-րդ, 5-րդ և 7-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:
4. 6-րդ մասը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«6. Լիազորած պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմնի սոցիալական սատարողն ունի սույն օրենքով, «Սոցիալական աշխատանքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով սահմանված իրավունքները և կրում է սույն օրենքով, «Սոցիալական աշխատանքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված պարտականությունները:»:

5. 9-րդ մասը, «վերադասը:» բառից հետո, լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Տնային այցելությունների ժամանակ սոցիալական աշխատանքի մասնագետը պետք է ներկայացնի սույն մասով նախատեսված վկայականը:»:

**Հոդված 8.** Օրենքի 41-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասի 4-րդ կետում հանել «(սոցիալականդեպք վարողին)» բառերը:
2. 3-րդ մասում «օրենքով» բառից հետո լրացնել «, «Սոցիալական աշխատանքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերը:

**Հոդված 9.** Օրենքի 42-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) որպես աջակցող ցանցի ներկայացուցիչ՝ մասնակցել սոցիալական աջակցություն ստացողի անհատական ծրագրի կազմմանը, կազմակերպությունների, սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների սոցիալական աշխատողների հետ համատեղ մշակել կանխարգելող ծրագրեր՝ ուղղված համայնքներում բացահայտված ռիսկային գործոնների նվազեցմանը, սոցիալական իրավունքների կոլեկտիվ պաշտպանության մեխանիզմների ձևավորման խթանմանը և պաշտպանությանը.»:

2. 3-րդ մասում «օրենքով» բառից հետո լրացնել «, «Սոցիալական աշխատանքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերը:

**Հոդված 10.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում ------------- -ին:

***<u>ՆԱԽԱԳԻԾ</u>***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337-Ն օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ մասում «աշխատողի» բառերը փոխարինել «աշխատանքի մասնագետի» բառերով:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում ------------- -ին: